

# Մեղու

Հայերենը
բոլորի համար

Մարդու և անհատի կայացման համար կարևոր է ճանաչել մայրենի լեզուն, զարգացնել ընդհանուր իմացությունն ու մտածողությունը: «Մեղու» մրցույթը՝ ժամանակակից առցանց թեստերի իր գործիքակազմով, նման հարթակ է բացում երեխաների համար: Այն միավորում է մտքի զարգացման համընդհանուր օրինաչափությունը հայագիտության ճանաչողական նպատակների հետ: 2014–ից «Մեղուն» այս առաքելությամբ անցկացվում է ՀՀ և Արցախի, իսկ 2019-ից՝ սփյուռքի 3-12-րդ դասարանների աշակերտների համար:

## Ինչո՞ւ «Մեղու»



**«Մեղու»-ի տրամաբանական խնդիրներն օգնում են՝**

- սովորել խաղային եղանակով,
- զարգացնել ինքնակազմակերպվելու կարողությունը,
- բարելավել հիշողությունը և ուշադրությունը,
- վարժվել առցանց գործիքներին և թվանշային լուծումներին,
- սահմանել նոր նշաձողեր և գերազանցել դրանք:

**222 000** մասնակից աշակերտ

Ավելի քան **1000** մասնակից սփյուռքից



Նոր ձևաչափ

# ԱՎԵԼԻ ՇԱՏ

## հնարավորություններ սովորողների համար

«Մեղու 2022»-ն անցկացվելու է նոր՝ դպրոցների բաժանորդագրության մոդելով: Խորհրդանշական վճարում կատարելով՝ դպրոցներն իրենց 3-12-րդ դասարանների բոլոր աշակերտների համար հասանելի կդարձնեն թե՛ մրցույթը, թե՛ կրթական այլ նյութեր ու ռեսուրսներ: Բաժանորդագրության համակարգին զուգահեռ պահպանվելու է անհատական գրանցման հնարավորությունը:

## Նոր մոդելի առավելությունները



### Սովորողի համար

- Մեկ անձի մասնակցության ավելի ցածր արժեք
- Գրանցում առանց վճարման կտրոնի անհրաժեշտության
- Մրցույթից առաջ նմուշային թեստեր ստանալու, օժանդակող վեբինարներին մասնակցելու հնարավորություն
- Տեխնիկապես բարելավված հարթակում թեստերի անցկացում




### Դպրոցի համար

- Մրցույթին մասնակցելու փաթեթային հնարավորություն
- Վեբինարների, տեխնիկական վերապատրաստումների և ուղեցույցների անվճար հասանելիություն ուսուցիչների համար
- Դպրոցի միացում արդի հմտություններ զարգացնող կրթական նախաձեռնությունների այբական համայնքին

**Իմացի՛ր ավելին**

contests.am

**Մասնակցի՛ր**

test.contests.am

**Հետևի՛ր մեզ**

AybContests

aybcontests

**Միացեք մեզ**

Ayb Educational Foundation